ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

30 հունիսի 2019 թվականի № 27-Հ

«ՎԱՄՄԱՎ» ՍՊԸ-Ի ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի կողմից քննված «ՎԱՄՄԱՎ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) նկատմամբ 2018 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 170-Ա հրամանով հարուցված վարչական վարույթի արդյունքները.

Պարզվեց, որ Ընկերությանը 2018 թվականի հունիսի 29-ի թիվ 01ԱԳ/29.4/3770-18 գրությամբ տրվել է զգուշացում թույլ տրված խախտումները վերացնելու վերաբերյալ: Զգուշացման մեջ առկա տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունն ունի ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված ընդերքօգտագործման վճարների մասով ապառքներ՝ 01.06.2018թ-ի դրությամբ պետական տուրքի մասով 2 121,7 (երկու միլիոն հարյուր քսանմեկ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ, շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի մասով 503,8 հազար (հինգ հարյուր երեք հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, մշտադիտարկումների մասով՝ 65,8 հազար (վաթսունհինգ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների մասով՝ 1 800.0 (մեկ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, ինչպես նաև սահմանված ժամկետներում լիազոր մարմին չի ներկայացրել 2017 թվականի 5-ՕՀՊ հաշվետվությունները:

Վարույթն իրականացնող մշտական հանձնաժողովի կողմից արձանագրվել է այն փաստը, որ լիազոր մարմնի սահմանած ժամկետում (90 օր) ընդերքօգտագործման իրավունք կրողը չի վերացրել զգուշացման հիմքերը և ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 7-րդ կետերով և 61-րդ հոդվածով նախատեսված դրույթները, օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-513 պայմանագրի 5.1.2 կետով նախատեսված պայմանները, որը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն հանդիսանում է ընդերքօգտագործման իրավունքի պայմանները ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ ընդերքօգտագործողին զգուշացում տալու հիմք: Ընկերությունը զգուշացման վերաբերյալ ծանուցումը ստացել է 2018 թվականի հուլիսի 18-ին, սակայն զգուշացման հիմքերը վերացված լինելու փաստը հավաստող որևէ փաստաթուղթ նախարարության կողմից չի ստացվել:

2018 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 170-Ա հրամանով Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթի նիստի օրվա, ժամի և վայրի մասին, վարչական մարմինը

պահպանելով օրենսդրությամբ սահմանված պահանջները՝ իրազեկել է Ընկերությանը: Սույն վարչական վարույթը երկու անգամ երկարաձգվել է հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածը: 2019 թվականի հունվարի 18-ին վարչական վարույթն իրականացնող հանձնաժողովին է ներկայացրել գրություն, որով միջնորդել է վարչական ակտի կայացումը հետաձգել, պարտավորվելով՝ մինչև սույն թվականի հունվարի 29-ը ամբողջությամբ մարել պարտավորությունները, սակայն նշված օրվա դրությամբ Ընկերության կողմից զգուշացման հիմքերը վերացնելու և պարտավորությունները կատարելու վերաբերյալ հավաստող որևէ ապացույց նախարարության կողմից չի ստացվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով և 6-րդ մասով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «ՎԱՄՄԱՎ» ՍՊ ընկերության ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդանիքարի գաբրոների հանքավայրի ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնել:

2. 2014 թվականի սեպտեմբերի 25-ի օգտակար հանածոների արդյունահանման թիվ ՇԱԹ-29/513 թույլտվությունը, լեռնահատկացման թիվ Լ-513 ակտն ուժը կորցրած ճանաչել և լուծել օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-513 պայմանագիրը:

3. Ընդերքի գործակալության պետին՝

1) եռօրյա ժամկետում ծանուցել ընկերությանը ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելու մասին.

2) ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3) սահմանված կարգով ծանուցել նաև համապատասխան պետական մարմիններին:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումն՝ ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով և այն կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:

6. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ**

1/30/2019

X

VERIFIED OCSP 30 Jan 19 15:52:25 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118